
ՊԱՐՍԻՑ ԱՐՔՈՒՆԻՔԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արշակունյաց թագավորության տապալումից հետո Պարսից արքունիքը սկսեց նոր քաղաքականություն վարել Պարսկահայաստանում: Եթե Արշակունիների օրոք ամեն ինչ արվում էր թագավորական իշխանությունը կործանելու համար, ապա նոր քաղաքականության նպատակը Մարզպանական Հայաստանի աստիճանական թուլացումն էր, որն իրականացվում էր տարբեր ուղղություններով՝ և՛ քաղաքական, և՛ ռազմական, և՛ կրոնական:

Արշակունյաց թագավորության վերացումից հետո Պարսից արքունիքն իր ձեռքը վերցրեց երկրի կառավարումը, որն իրականացվում էր մարզպանների միջոցով: Այժմ Հայաստանի նկատմամբ Պարսից արքունիքի վարած քաղաքականության նպատակը հայության վերջնական ծուլումն էր: Նման քաղաքականության իրականացման միջոց էր նաև նրա հարկային քաղաքականությունը, որի իրագործողը Հայաստանում հազարապետն էր: Նա, հավաքելով երկրի հարկը, այն ներկայացնում էր մարզպանին, իսկ վերջինս ուղարկում էր Պարսից արքունիք, և ինչպես Եղիշեն է նշում՝ «...գանձն յարքունիս Պարսկաց երթայր»¹:

Թեպետ հարկն ամբողջությամբ ուղարկվում էր Պարսից արքունիք, սակայն դրա չափերը չէին բավարարում պարսիկներին, և նրանք ամեն աշխարհագիր անցկացնելիս ավելացնում էին հարկերը: Այսպես՝ Հազկերտ Բ-ի օրոք Հայաստանից գանձվող հարկերն ավելին էին, քան նրա հոր թագավորության տարիներին. «Իսկ զմտից և զսակից, և որ այլ ևս էին հարկ աշխարհին, բազմագոյն քան առ հարբն նորա երթայր յաշխարհիս» (Եղ., Բ):

Որքան ամրապնդվում էր Պարսից արքունիքի ներքին և արտաքին դրությունը, այնքան ծանրանում էր նվաճված ժողովուրդների, այդ թվում՝ հայերի նկատմամբ վարվող հարկային քաղաքականությունը: Այդպես Եղավ նաև Հազկերտ Բ-ի օրոք, որը, ամրապնդելով երկրի ներքին դրությունը և հաջողության հասնելով արտաքին քաղաքականության մեջ, նոր վերաբերմունք որդեգրեց նվաճված ժողովուրդների նկատմամբ: Նա երկրի հարկն ավելացնելու նպատակով նոր աշխարհագիր իրականացրեց նաև Հայաստանում: Սակայն դա մարզպանության տարիներին իրականացված միակ աշխարհագիրը չէր: Ըստ պատմիչների տեղեկության՝ աշխարհագիր իրականացվել է նաև Կավատի որդի Արտաշիրի թագավորության 2-րդ տարում, որը «... իբրև ստուգեաց զամենայն բարութիւնս երկրիս և հաստատեաց ի միտս իւր զոչ ծածկեալն ի նմանէն եղ ի մտի իւրում ի ժամա-

¹ Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Եր., 1989, Ա: Այսուհետև այս հրատարակությունից մեջբերումներ կատարելիս տեքստում՝ փակագծերի մեջ, կնշենք Եղ. և համապատասխան գլխահամարը:

նակս անառնային վարել յաշխարհն Յայոց, և զնոսա ևս սահմանակցօք իւրեանց ածել ի հնազանդութիւն»²:

Հարկերը ծանր էին հատկապէս քրիստոնյաների համար, որոնց նկատմամբ Հազկերտ Բ-ի օրոք հատուկ քաղաքականություն էր վարվում: Նա հրամայում է «...յափշտակել զամենայն ինչս քրիստոնէից և զստացուածս, որք էին ի մեջ Պարսկաց աշխարհին» (Եղ., Ա): Քրիստոնյաների նկատմամբ նման վերաբերմունքը նրանց կրոնափոխ անելու նպատակ էր հետապնդում: Պարսից արքունիքը կրոնափոխությունը խրախուսելու համար ուրացողներին հարկից ազատում էր:

Այս մասին Եղիշեն նշում է, որ պարսիկները հայտնում էին, որ «Եթէ կամօք յանձն առնուք զօրէնս..., թողութիւն հարկացն յարքունուստ լիցի ձեզ...» (Եղ., Գ):

Նույնն է վկայում նաև Մովսէս Կաղանկատվացին՝ նշելով, որ «Եւ հրամանաւ արքայի (Հազկերտի -Ռ. Յ.) ստիպեն զամենեսեան և ասեն. «Եթէ կամաւ յանձն առնուք զօրէնս..., թողութիւն հարկաց արքունի լինի ձեզ» (Մ. Կաղ., Բ - Բ):

Այս երկու հեղինակների հիշատակած տեղեկությունների համեմատությունը թույլ է տալիս ասել, որ Մովսէս Կաղանկատվացուց բերված հատվածը վերցված է Եղիշեի աշխատությունից. նախ՝ որ այս երկու տեղեկություններն էլ վերաբերում են Աղվանից աշխարհին, և երկրորդ՝ որ Մովսէս Կաղանկատվացին ժամանակագրական առումով հաջորդում է Եղիշեին:

Հարկերի ավելացմանը զուգահեռ ավելանում էին նաև հարկահավաքության ժամանակ իրականացվող կամայականությունները, քանի որ հարկահավաքները «Ոչ ըստ արքունի արժանավորութեանն առնուին, այլ հինաբար յափշտակելով, մինչև ինքեանք իսկ մեծապէս զարմանային, թէ ուստի այս ամենայն գանձ ելանէ՝ զի՞արդ շէն կայցէ աշխարհն» (Եղ., Բ): Հարկվում էին «...ոչ միայն շէնաց այլ և աւերակուց» (Եղ., Բ) և «...ուստի արժան էր առնուլ հարիւր դահեկանաւ չափ, կրկին առնուին» (Եղ., Բ):

Հարկի տեսակները բազմաթիվ էին, բայց հատկապէս ծանր էին լեռների, դաշտերի և անտառների օգտագործման համար գանձվող հարկերը: Այս մասին Եղիշեն վկայում է, որ «Նա և բնաւ ո՞վ իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից և սակից և բաժից և հասից լերանց և դաշտաց և մայրեաց» (Եղ., Բ): Սակայն մուտը, հասը, բաժը, սակը դեռ բոլոր հարկատեսակները չէին, որ հավաքվում էին ժողովրդից:

Առավել ծանրացավ հարկային քաղաքականությունը, երբ Պարսից արքունիքը հարկահավաքության ողջ հսկողությունն իր ձեռքում պահելու համար հազարապետի պաշտոնը վերցրեց հայ նախարարներից և փոխարենը պարսիկ նշանակեց, մի բան, որը Եղիշեն համարում է Դենշապուհի աշխարհագրի իրականացրած գործողություններից չարագույնը, թեև այն հինգերորդն է հիշատակում. «Եւ ևս չարագոյն հինգերորդն. քանզի որ հազարապետն է աշխարհին, իբրև զհայր վերակացու համարեալ աշխարհականաց քրիստոնէից զրգռեաց յարոյց զամբաստանութիւն ի վերայ նորա, և հանեալ զնա ի գործոյն՝ փոխանակ նորա պարսիկ ած յաշխարհն...» (Եղ., Բ):

Հազկերտ Բ-ի օրոք հատկապէս ծանրացավ եկեղեցու դրությունը:

² Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Եր., 1983, Բ-ԺԶ:

Պատմագիտության մեջ ընդունված կարծիք է, որ Հայոց եկեղեցին մինչև Դեմշապուհի աշխարհագիրը ապահարկ է եղել և միայն այդ ժամանակից սկսած է հարկ վճարել: Սակայն Եղիշեն նշում է, որ Դեմշապուհը «...զազատութիւն եկեղեցւոյն արկանէր ի ծառայութիւն» (Եղ., Բ): Բայց այստեղ «ազատութիւնը» չի նշանակում, որ եկեղեցին մինչ այդ ոչ մի հարկ չի վճարել, այլ պարզապէս պետք է հասկանալ, որ բարձրաստիճան հոգևորականները պատկանել են ազատների դասին, ինչպես նախարարները: Իսկ նախարարները հարկ են վճարել արքունիքին, կատարել են ռազմական ծառայություն: Այստեղ պետք է ընդունել, որ եկեղեցու նախկին իրավունքները սահմանափակվեցին, և նրա նկատմամբ նոր հարկային քաղաքականություն վարվեց: Որ հոգևորականները հարկատու են եղել, վկայում է նաև Մովսես Խորենացին, որը, խոսելով Շամուել քահանայապետի (կաթողիկոս) մասին, նշում է, որ նա եպիսկոպոսներին հալածում էր՝ չնչին պատճառներ գտնելով արքունական հարկերի խափանման մեջ. «...զկենդանեացն դոյզն ինչ գտեալ պատճառս խափանման հարկացն արքունի՝ հալածական ամէր, յինքն կորզելով զամենեցուն տունս»³: Այս տեղեկությունից հետևում է, որ մինչև Դեմշապուհի իրականացրած աշխարհագիրը հայ եպիսկոպոսներն արքունի հարկ են վճարել: Մովսես Խորենացին այլ հիշատակություն ևս ունի հոգևորականների՝ հարկման մասին, որը վերաբերում է Պապի թագավորության ժամանակաշրջանին: Ըստ պատմիչի՝ Մերուժան Արծրունին «Ձեպիսկոպոսս և զքահանայս հարկաց պատճառաւ կապեալ յերկիրն Պարսից տայր տանել» (Խոր., Գ - ԼԶ):

Պետք է կարծել, որ այս ժամանակ եպիսկոպոսներն ու քահանաները հրաժարվել են Մերուժանին հարկ վճարել, որի պատճառով էլ վերջինս նրանց գերեվարել է Պարսկաստան: Այս տեղեկություններից պետք է ենթադրել, որ Արշակունիների թագավորության տարիներին հայ եկեղեցին, ինչպես նախարարները, արքունի հարկ է վճարել պետությանը, իսկ Արշակունիների թագավորության վերացումից հետո այդ հարկն ուղարկվել է Պարսից արքունիք, սակայն Դեմշապուհի իրականացրած աշխարհագրի հետևանքով եկեղեցու արտոնությունները սահմանափակվել են՝ «...ազատութիւն եկեղեցւոյն արկանէր ի ծառայութիւն» (Եղ., Բ):

Բայց Պարսից արքունիքը դրանով չի բավարարվում: Դեմշապուհը նաև «...միայնակեաց քրիստոնեայք, որ բնակեալ էին ի վանորայս, ընդ նովին աշխարհագրով էարկ» (Եղ., Բ): Դեմշապուհն այնպես «...զհարկ աշխարհին առաւել ծանրացոյց» (Եղ., Բ), որ որպես հարկ էին տանում անգամ եկեղեցու սպասքը. «...փակեցցին և կնքեցցին դրունք սուրբ տաճարին, գրով համարով առցին նուիրեալ սպասքն յարքունիս...» (Եղ., Բ):

Հարկային քաղաքականության ծանրացմամբ Պարսից արքունիքը ոչ միայն ավելացնում էր Մեծ Հայքից գանձվող հարկերը, այլև այն որպես ճնշման միջոց էր օգտագործում քրիստոնեական կրոնի նկատմամբ: Քանի որ հավատափոխ լինելու համար քրիստոնյաներին ազատում էին հարկերից, ուստի հարկերի ծանրությանը չդիմանալով՝ շատերը բռնում էին հավատափոխության ուղին՝ «...մանաւանդ զի կամօք են կուրացեալք և ոչ ի հարկէ...» (Եղ., Ե):

Որպես հարկ Պարսից արքունիք էր գնում նաև երկրի ոսկին: Այս մա-

³ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Եր., 1991, Գ - 42:

սին վկայում է Ղազար Փարպեցին, ըստ որի՝ Վահան Մամիկոնյանը, ընդդիմանալով ուրացած նախարարների չարախոսություններին, «...անեալ փութանակի զբազմութիւն ոսկւոյն՝ հասանէր ի դուռն» Պարսից⁴, որպեսզի իր հավատարմությունը ցույց տա արքունիքին:

Երկրի հարկն ամբողջությամբ կուտակվում էր մարզպանի ձեռքում, որն այն ուղարկում էր Պարսից արքունիք: Արքունի հարկն անձեռնմխելի էր: Այն գողանալու դեպքում մարզպանին ծանր պատիժ էր սպասվում: Այդպես եղավ Վասակ Սյունեցու հետ: Եղիշեն վկայում է, որ Վասակ Սյունեցուն «...գող ևս գտանէր հարկի աշխարհին, որ յարքունիսն երթայր» (Եղ., 2): Պարսից արքունիքը «Եւ այնպէս սաստիկ արկին զպարտերս հարկաց աշխարհին ի վերայ տան նորա (Վասակի - Ռ. Յ.), որ մինչև զհարց և զհաւուց և զիւր արարս և զգարոյս կանանց ևս եղ ի վերայ և ետ և տուժեցաւ, և ոչ կարաց հատուցանել զպարտսն արքունի» (Եղ., 2):

Արքունի հարկի վճարման խափանման մասին վկայում է նաև Ղազար Փարպեցին: Ըստ նրա՝ յուրացված հարկի փոխհատուցման համար Վասակը և նրա որդիները պետք է վճարեին. «Եւ զհարկեր իմոյ աշխարհին Յայոց... և կարասին այնչափ զոր հաներ՝ հրամայեցաք խնդրել ի տանէ քունմէ և յորդուց քոց՝ մինչև վճարեսցի ամենայն» (Փարպ., Բ - ԽԶ):

Արքունի հարկից բաժին էր հասնում նաև պարսիկ մարզպաններին, քանի որ «...մարզպանն պարսիկ, որ երթայր յաշխարհն՝ կնաւ երթայ և որդուվք, դրամք և սիրելովք, ծառայիւք և աղախնօք. և այնք ամենեքեան թէ Արեաց տեառն զռոճիկ ուտեն՝ չէ սակաւ ծախսն, և թէ զաշխարհին ուտեն՝ շատ վտանգ հասանէ աշխարհին մարդկան» (Փարպ., Գ - ԴԸ):

Ծանր հարկային քաղաքականությունը հանգեցնում էր նախարարների դժգոհությանը, որոնք հաճախ ապստամբում էին և հրաժարվում հարկն արքունիք ուղարկել: Տվյալ դեպքում ապստամբության ղեկավարներն իրենք էին տնօրինում հավաքված արքունի հարկը: Այսպես վարվեց Վահան Մամիկոնյանը, որը «...ժողովեաց և զհարկս աշխարհիս Յայոց և շինեաց զեկեղեցիս մեծամեծս, զոր աւերեալ էր Պարսից ի Վաղարշապատ քաղաքի և ի Դըւնի և ի Սգրայս և ի բազում տեղիս աշխարհիս Յայոց»⁵:

Ապստամբելիս հայ նախարարներն իրենք էին որոշում ինչպիսի հարկային քաղաքականություն վարել: Այսպես՝ նրանք հարկի դիմաց զինվորական ծառայության էին կոչում գյուղացիներին: Այս մասին վկայում է Ղազար Փարպեցին՝ ասելով, որ Ավարայրի ճակատամարտին մասնակցում էին զինվորներ, որոնք հարկի դիմաց էին եկել կռվի դաշտ. «Իսկ այլ բազմութիւն զօրացն Յայոց, որք առ հարկի և ոչ կամաւ...անդէն ի փախուստ դարձեալ կորնչէին գյաւիտենից կորուստն» (Փարպ., Բ - ԼԹ):

Մարզպանության տարիներին հարկային քաղաքականության զարգացման միտումը չնայած հարկերի աստիճանական ծանրացումն էր, սակայն դա պայմանավորված էր ներքին իրավիճակով: Պարսից արքունիքը երբեմն ներում էր հարկերը, երբեմն՝ պակասեցնում: Այսպես եղավ նաև Ավարայրի ճակատամարտից հետո, երբ Յայաստան ուղարկված Ատրոր-

⁴ Ղազար Փարպեցի, Պատմութիւն Յայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, Եր., 1982, Գ - Կէ:

⁵ «Պատմութիւն Սեբեոսի», Եր., 2005, Ը:

միզդ մարգպանը, որը «երկիրը սիրով նվաճելու» ցուցում ուներ արքունիքից, «...թողուլ հրամայել զհարկս աշխարհին» (Եղ., 2), քանի որ հայ նախարարներից ոմանք դեռ զինված ամրացել էին որոշ բերդերում և վտանգ էին ներկայացնում:

Հայ ժողովրդի դրությունը բարելավվեց նաև Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբության շնորհիվ, քանի որ քուշանների դեմ մղած պատերազմում զոհված Պարսից արքա Պերոզին հաջորդած Վաղարշը երկիրը կայունացնելու համար զիջումների դիմեց ապստամբ հայերի հետ հարաբերություններում, իսկ Վահան Մամիկոնյանին նշանակեց Հայոց մարգպան:

Պարսից արքունիքը ձգտում էր Հայաստանից գանձվող հարկը, որքան հնարավոր է, անկորուստ տեղ հասցնել: Պատճառներից մեկն էլ դա էր, որ Պարսից արքունիքը Վահան Մամիկոնյանին նշանակեց Հայոց մարգպան, քանի որ, մարգպան լինելով, նա, ի տարբերություն պարսիկ մարգպանների, ոչ թե արքունի հարկով էր պահելու իր ընտանիքը, ազգականներին ու ծառաներին, այլ իր նախարարական կալվածքներից ստացվող եկամուտներով, դրա շնորհիվ ավելի շատ հարկ կմուտքագրվեր Պարսից արքունիք:

Այսպիսով՝ Հայաստանի նկատմամբ Պարսից արքունիքի հարկային քաղաքականությունը նրա որդեգրած ընդհանուր քաղաքականության անբաժանելի մասն էր և պայմանավորված էր Պարսից պետության ներքին և արտաքին քաղաքական իրավիճակով, միշտ արտահայտվում էր նրա շահերով, և ժողովրդից գանձվող հարկերը պարբերաբար ծանրացնելով՝ նպատակ էր հետապնդում աստիճանաբար ձուլելու հայ ժողովրդին: Այն հարուցում էր ժողովրդի և հայ նախարարների ու եկեղեցու դժգոհությանը, որոնք ապստամբության էին դիմում նման իրավիճակը թոթափելու համար:

РУЗАННА АРУТЮНЯН – Налоговая политика персидского двора в Армении в период марзпанства. – После падения царства Аршакидов, в период марзпанства, персидский двор проводил в Армении стратегию, цель которой состояла в ассимиляции армянского народа. Этой цели служила и налоговая политика, которая постепенно возлагала всё более тяжелое бремя не только на простой народ, но и на знать и церковь. Эта политика в конце концов привела к восстанию.

RUZANNA HARUTYUNYAN – The Tax Policy of Persian Royal Court in Marzpanate Armenia. – The tax policy of Persian Royal Court in Marzpanate Armenia was the part of its domestic policy. The definitive goal of this policy was the assimilation of Armenian people.

The tax policy of Persian Royal Court gradually became harder not only for the Armenian people but also for nakharars and the Armenian Church. For this purpose all the forces united and fought against the policy of Persian Royal Court, which derived from the interests of its own country and state.